

ՊԱՆԴՐՄԱՅԻ ԽՈՍՎԱՆՔԸ

Ռ. Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Վնասողիայի հյուսիս-արևմուտքում գտնվող այս քաղաքում մինչև մեծ լողեսուր ապրել է հեծ հայություն, որի խոսվածքը շնայած շատ կողմերով նույնն է լողել հարևանների հետ, բայց որոշ կողմերով էլ՝ բավական ինքնատիպ:

Պանդրմայի հայերենը շունի քմային ձայնավորներ և երկբարբառներ. բաղաձայնական համակարգը եռաստիճան անտեղաշարժ է. օրինակ՝ բան<բան, դնել<դնել, գնալ<գնալ, գիրկ<գիրկ, գյաղ<գիւղ, գէղացի<գիւղացի. — պանիր<պանիր, պատ<պատ, տուն<տուն, տարի<տարի, տալ<տալ, տխուր<տխուր, տղա<տղայ, տէր<տէր, տանել<տանել, տախտակ<տախտակ, կոիվ<կոիւ, կանչել<կանչել, կարթալ<կարդալ, կարմիր<կարմիր, կողմ<կողմ, կարապէտ<կարապետ, ծար<ծայր, ճամփա<ճանապարհ:

Ձայնեղ պայթականների տեղ հաճախ գտնում ենք շնչեղ խուլեր՝ ըստ եփևույթին գրական լեզվի աղղեցությունմբ. քործ<գործ, քովել<գովել, թրացի<դրացի, ցըթել<ձգել:

Անունների հոգնակի թվի սեփորական կադմիչներն են եւ և ներ: Ամենից տարածված հոլովումը ի-ն է. այդպես է նաև հոգնակի թվում (ԿԸ ճյուղի բարբառներում ավելի սեփորական է հոգնակին ենթարկել ու հոլովման):

Ինչպես ԿԸ ճյուղի մյուս բարբառներում, այնպես էլ այստեղ ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է սեռական-տրականով և մեջ կապով. սեռականը հոգ է ստանում, իսկ հայցականը նման է ուղղականին (անձնական դերանունների դեպքում՝ տրականին). պատ, պատի(ն), պատէն, պատով-պատէր, պատէրի(ն), պատէրէն, պատէրով. տախտակ, տախտակի(ն), տախտակէն, տախտակով-տախտակնէր, տախտակնէրի(ն), -րէն, -րով. կարապէտ, կարապէտի(ն), կարապէտէն, կարապէտով:

Անձնական և ցուցական դերանունները հոլովվում են այսպես.

-յէս, իմ, ինձի, իմէ, ինձմով
մէք, մէր, մէզի, մէզմէ, մէզմով
ինքը, իրէն, իրմէ, իրմով
-ասլանիկա, անօր, անօրմէ, ան(օր)ով,
ասլասիկա, ասօր, ասօրմէ, ասով
ատուատիկա, ատօր. ատօրմէ, ատով

դուն, քու, քեզի, քեզմէ, քեզմով
դուք, ձեր, ձեզի, ձեզմէ, ձեզմով
իրէնք, իրէնց, իրէնցմէ, իրէնցմով
անօնք, անօնց, անօնցմէ, անօնցով
ասօնք, ասօնց, ասօնցմէ, ասօնցով
ատօնք, ատօնց, ատօնցմէ, ատօնցով:

Այս խոսվածքում բոլոր բայերը ենթարկվում են երկու խոնարհման՝ սկզբում ի (մնամ, թուլիմ). անվթար պահպանվել են օժանդակ բայի ձևերը. ներկա՝ էմ, էս, է, էնք, էք, էն, անցյալ՝ էի, էիր, էր, էինք, էիք, էին:

Նղանակները հինգն են՝ սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական, հրամայական: Սահմանական եղանակի ներկա, անցյալի անկատար, ապառնի և անցյալի ապառնի, պայմանական ու հարկադրական եղանակների ժամանակները կազմվում են ըղձական եղանակի ձևերով և այլևայլ

մասնիկներով: Ինչպես երևում է, դրարարի սահմանական ներկայի ու անց-
յալի (նաև հրամայականի) ձևերը սլաշվել են համեմատաբար անխաթար
Իրաբարի սահմանական ներկայի կամ արդի ըղձական ապառնու գիմաշին
վերջավորությունները դրեթն փոփոխություն չեն ենթարկվել (ամփոփվել են
միայն լծորդությունները): մնամ, մնաս, մնա, մնանք, մնաք, մնան, թրոշիմ,
թրոշիս, թրոշի, թրոշիք, թրոշիք, թրոշին:

Ահա այս ձևերի վրա էլ ավելացվել են նորանոր մասնիկներ և կազմվել
նոր եղանակներ:

Պայմանական ապառնի՝ կրմնամ, կրմնաս, կրմնա, կրմնանք, կրմնաք,
կրմնան. կրթրոշիմ, կրթրոշիս, կրթրոշի, կրթրոշինք, կրթրոշիք, կրթրոշին:

Հարկադրական ապառնի՝ մնամ տօ, մնաս տօ, մնա տօ, մնանք տօ, մնաք
տօ, մնան տօ. թրոշիմ տօ, թրոշիս տօ, թրոշի տօ, թրոշինք տօ, թրոշիք տօ,
թրոշին տօ:

Սահմանական ներկան կազմվում է սլաշմանական ապառնու ձևերով և
անփոփոխ ա մասնիկով՝ կրմնամ ա, կրմնաս ա, կրմնա յա, կրմնանք տ,
կրմնաք ա, կրմնան ա. կրթրոշիմ ա, կրթրոշիս ա, կրթրոշի յա, կրթրոշինք ա,
կրթրոշիք ա, կրթրոշին ա: Կազմության այս հղանակը միակն ու սովորա-
կանն է:

Հայերեն բարբառներում այս հղանակը խորթ չէ, բայց տարածված էլ չէ:
Կան բարբառներ, որոնք հղանակիչը դնում են բայաձևից և՛ առաջ, և՛ հետո
(կր լամ կր ռլախիս էմ») միաժամանակ, բայց այդ լինում է սովորաբար միա-
վանկ բայերի դեպքում: Կան բարբառներ էլ, որոնք հղանակիչը նույն ձևով
կրկնում են ձայնավորով սկսվող բայերի դեպքում (կասեմ կր Դասում եմ):
Պանդամայի խոսվածքը առայժմ միակն է, որը սահմանական ներկան
կազմում է երկու տարբեր հղանակիչներով՝ բայասկզբում կը (կու, կէ, կ),
խսկ վերջոս ա ավելացնելով: Ա հղանակիչը, ինչպես հայտնի է, ստացվել է
«հա» բառից և որպես սահմանական ներկայի կազմիչ զործածական է մի
շարք բարբառներում:

Սահմանական ապառնին արտահայտվում է հարկադրական ապառնու
ձևերով, այն տարբերություններով միայն, որ հղակի երրորդ դեմքի գրո վերջավոր-
ությունն առջ լինում է վ, օրինակ՝ մնամ տօ, մնաս տօ, մնավ տօ, մնանք
տօ, մնաք տօ, մնան տօ. թրոշիմ տօ, թրոշիս տօ, թրոշիվ տօ, թրոշինք տօ,
թրոշիք տօ, թրոշին տօ:

Եթե տօ հղանակիչը անփոփոխ է, ապա կը-ն փոփոխվում է, նրա ը ձայ-
նավորը սղվում է, եթե նրան հաջորդում է ռոնէ ձայնավորով սկսվող բայաձև
(լանէին ռլանին, կուշէր ռլուշեր, կիյնար ռկրնկնեռ, կէրթա ռկերթա):
Կամ դառնում է Լ՝ ն-ով սկսվող բայաձևից առաջ (կէէփէր ռկէփէր): Միա-
վանկ բայերի հետ կը հղանակիչը գործ է ածվում կու ձևով (կուլա՜ ռկլար):

Բոլոր հղանակների անցյալի ձևերը կազմվում են նույն հղանակով ինչ
ներկայի ձևերը, սակայն այն տարբերությամբ, որ հղակի երրորդ դեմքի ի՞ր
վերջավորությունը փոխարինվում է լս-ով, որի ս-ն ուրիշ բան չէ, եթե ոչ ներ-
կայի նույն դեմքի ս վերջավորությունը: ահա այդ ձևերը՝ ի, իս, արլէո, ինք,
իք, ին. մնայի, մնայիս, մնար, մնայինք, մնայիք, մնային. թրոշէյր, թրոշէյիս,
թրոշէր, թրոշէյինք, թրոշէյիք, թրոշէյին:

Պայմանական անց. ապառնի՝ կրմնայի, կրմնայիս, կրմնար, կրմնայինք, կրմնայիր, կրմնային. կրթըռչէյի, կրթըռչէյիս, կրթըռչէր, կրթըռչէյինք, կրթըռչէյիր, կրթըռչէյին:

Հարկադրական անց. ապառնի՝ մնայի տօ, մնայիս տօ, մնար տօ, մնայինք տօ, մնայիր տօ, մնային տօ. թըռչէյի տօ, թըռչէյիս տօ, թըռչէր տօ, թըռչէյինք տօ, թըռչէյիր տօ, թըռչէյին տօ:

Սահմանական անց. ապառնին արտահայտվում է հարկադրականի համապատասխան ձևերով, իսկ անց. անկատարը, որը կազմվում է ա մասնիկով (և պայմանական անց. սպառնու ձևերով), էզակի երրորդ դեմքի ձևում դառնում է աբ, որի Ե-ն հոգնակի երրորդ դեմքում ընկնում է կամ պահվում. օրինակ՝ կրմնայի յա, կրմնայիս ա, կրմնար ար, կրմնայինք ա, կրմնայիր ա, կրմնային ա(ր). կրթըռչէյի յա, կրթըռչէյիս ա, կրթըռչէր ա, կրթըռչէյինք ա, կրթըռչէյիր ա, կրթըռչէյին ա(ր):

Այս ա մասնիկը նույնն է, ինչ ունենք ներկայի ձևերում, բայց թև ինչու երրորդ դեմքի ձևերում հանդես է գալիս աբ ձևով, պարզ չէ:

Եղանակային միուս ձևերը սովորական կազմություն ունեն. ահա կարգալ և տեսնել բայերի խոնարհման ամբողջական պատկերը.

Սահմանական եղանակ

Ներկա

կրկարթամ ա, կրկարթաս ա, կրկարթա յա, կրկարթանք ա, կրկարթաք ու, կրկարթան ա. կրտէսնամ ա, կրտէսնաս ա, կտէսնա յա, կտէսնանք ա, կրտէսնաք ա, կրտէսնան ա

Անց. անկատար

կրկարթալի յա, կրկարթայիս ա, կրկարթար ար, կրկարթայինք ա, կրկարթայիր ա, կրկարթային ա(ր). կրտէսնայի յա, կրտէսնայիս ա, կրտէսնար ար, կրտէսնալինք ա, կրտէսնայիր ա, կրտէսնային ա(ր)

Ապառնի

կարթամ տօ, կարթաս տօ, կարթավ տօ, կարթանք տօ, կարթաք տօ, կարթան տօ. տէսնամ տօ, տէսնաս տօ, տէսնավ տօ, տէսնանք տօ, տէսնաք տօ, տէսնան տօ

Անց. ապառնի

կարթայի տօ, կարթայիս տօ, կարթար տօ, կարթայինք տօ, կարթայիր տօ, կարթային տօ, տէսնալի տօ, տէսնայիս տօ, տէսնար տօ, տէսնայինք տօ, տէսնայիր տօ

Վաղակատար

կարթացէր, մնացէր, տէսէր, թըռ(չ)էր էմ, էս, է, էնք, էք, էն

Անց. վաղակատար

կարթացէր, մնացէր, տէսէր, թըռ(չ)էր էի, էիր, էր, էինք, էիր, էին

Հարակատար

տէսած էմ, էս, է, էնք, էք, էն

Անց. հարակատար

տէսած էի, էիր, էր, էինք, էիր, էին

Անց. կատարյալ

կարթացի, կարթացիւ, կարթաց, կարթացինք, կարթացիք, կարթացին
մնացի, մնացիր, մնաց, մնացինք, մնացիք, մնացին
տէսա, տէսար, տէսաւ, տէսանք, տէսաք, տէսան
թրո(չ)ա, թրո(չ)ար, թրո(չ)աւ, թրո(չ)անք, թրո(չ)ար, թրո(չ)ան

Բղական եղանակ

Ապառնի

կարթամ, կարթաս, կարթա, կարթանք, կարթաք, կարթան
տէսնամ, տէսնաս, տէսնա, տէսնանք, տէսնաք, տէսնան

Անց. ապառնի

կարթայի, կարթայիս, կարթար, կարթայինք, կարթայիք, կարթային
տէսնայի, տէսնայիս, տէսնար, տէսնայինք, տէսնայիք, տէսնային

Պայմանական եղանակ

Ապառնի

կրկարթամ, կրկարթաս, կրկարթա, կրկարթանք, կրկարթաք, կրկարթան
կրտէսնամ, կրտէսնաս, կրտէսնա, կրտէսնանք, կրտէսնաք, կրտէսնան

Անց. ապառնի

կրկարթայի, կրկարթայիս, կրկարթար, կրկարթայինք, կրկարթայիք, կրկարթային
կրտէսնայի, կրտէսնայիս, կրտէսնար, կրտէսնայինք, կրտէսնայիք, կրտէսնային

Հարկադրական եղանակ

Ապառնի

կարթամ տօ, կարթաս տօ, կարթա տօ, կարթանք տօ, կարթաք տօ, կարթան տօ
տէսնամ տօ, տէսնաս տօ, տէսնա տօ, տէսնանք տօ, տէսնաք տօ, տէսնան տօ

Անց. ապառնի

կարթայի տօ, կարթայիս տօ, կարթար տօ, կարթայինք տօ, կարթայիք տօ, կարթային տօ
տէսնայի տօ, տէսնայիս տօ, տէսնար տօ, տէսնայինք տօ, տէսնայիք տօ, տէսնային տօ

Հրամայական եղանակ

կարթա՛-կարթացէ՛ք, մնա՛-մնացէ՛ք, տէս՛-տէսէ՛ք, թրո(չ)է՛-թրո(չ)է՛ք

Արդ, ի՞նչ նորութիւն է ընծեռում Պանդրմայի խոսվածքը.

1. Մեր բարբառների մեծ մասը («կը» ճյուղ) պայմանական եղանակի ձևերը հավասարապես գործ է ածում նաև որպես սահմանական ներկա ու անկատար. այս խոսվածքը ևս իր և մասնիկով տարբերակել է դրանք:

2. Հարկադրական եղանակի ձևերը կազմում է մի նոր մասնիկով՝ տօ. որը ծագում է պիտոյ նախադոր ձևից (հմմտ. Համշենի բարբառի տա թեական մասնիկը՝ գաշտօ՞մ տա՞ թե՛|որ կարդում»):

3. Սահմանական ապառնու և անց. ապառնու համար գործ է ածվում

հարկադրականը, բայց սահմանական ապառնու եզակի երրորդ դեմքը ստանում է վ՝ վերջավորութուն (ի՞նչ կապ ունի այստեղ ա խոնարհման որոշ բանի անց. կատարյալի եզակի երրորդ դեմքի վերջավորութունը, որը տարածվել է նաև ի խոնարհման բայերի վրա)։

4. Ըղձական եղանակի անցյալի ապառնու եզակի երկրորդ դեմքի իր վերջավորութունը, որը առկա է նաև սահմանական ու հարկադրական եղանակների անցյալի ձևերում, փոխարինվել է իս վերջավորությամբ։

Թե աշխարհագրական ինչպիսի տարածում ունեն այս բոլորը, պարզ չէ, քանի որ հայ բարբառագիտության անհայտ է արևմտյան Անատոլիայի հայերեն խոսվածքների մեծագույն մասը։

Այս խոսվածքին ընթերցողին ծանոթացնելու համար ստորև բերում ենք Հելվ. Թումանյանի «Դիրքերը» պատմվածքի մեկ հատվածի փոխադրությունը.

Գէղացի Համփարցումին տունը կըռիվ կանէին ար։ Համփարցումը կուզէր ար իրէն տասնէրկու տարէկան Քիրքորը տանի քաղաք, քործի մը տա, քի մարթ ըլլա, բանի։

Կընիկը խայիլ շէր ըլլար ա.— Չէմ ուզէր, իմ պըզտիկ շօջուխս ան անիրավ աշխարհը մի ցըքէր, չէմ ուզէր,— կուլար ար կընիկը։

Ամմա Համփարցումը չըլըսէց։ Մէկ խաղաղ առտվանց մըն էր, մէկ տըխուր առտըվանց. տունէցինէրը ու թըրացինէրը տէկան տէօր գյաղին ծարը, Քիրքորի էրէսնէրը պաքին ու ճամփու խավըցին։

Քուրը՝ Զանին, կուլար ար, իսկ պըզտիկ Քալուստը մարին գիբկէն կըպօռար ար.— Քիրքոր, ո՞ւր կէրթաս ա, հէ Քիրքոր...

Քիրքորը շապուխ-շապուխ (կամ՝ աճէլէ-աճէլէ) էտէվը կընայէր ար, կըտէնար ար տահա գյաղին ծարին կըկէնային ար անօնք, ու մարը գօքնօցօվ կըսըրփէր ար աչքէրը։ Կէնէ հայրիկին քօվէն կըվազէր ար, յա առչէվը կիյնար ար։ Մէկ մըն ա էտէվը նայէցավ՝ գյաղը գօցվէր էր լէռին էտէվը։ Անկէց յէտքը (կամ՝ սօրնա) Քիրքորը էտէվ կիյնար ար։

ГОВОР ПАНДРМЫ

Р. А. БАГРАМЯН

Доктор филологических наук

Р е з ю м е

Говор Пандрмы во многом тождественен с соседними говорами армянского языка, но по ряду явлений отличается от них. Так, в большинстве армянских говоров формы условного наклонения глаголов употребляются как в будущем и прошедшем временах условного наклонения, так и в настоящем и прошедшем—изъявительного наклонения, а данный говор при помощи неизменяемой частицы «а» разобрал их.

Кроме того, принудительное наклонение образуется частицей «то», третье лицо единственного числа будущего времени изъявительного наклонения—окончанием «в» для всех спряжений и, наконец, общеармянское окончание «р» второго лица прошедшего времени желательного наклонения заменено окончанием «с».